



Kingdom of the Netherlands



# Չ Ե Կ ՈՒ Յ Ց

**Գլոբալ Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում  
իրականացվող «ՄԻԱԿ վարակի կանխարգելում ԹՆՕ-ների  
շրջանում» ծրագրի և մեթադոնային փոխարինող բուժում ստացող  
շահառուների կարիքների գնահատման վերաբերյալ**

Բ.Երևան, Հայաստան

2017



# Չ Ե Կ ՈՒ Յ Ց

## **Գլոբալ Հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացվող «ՄԻԱՎ վարակի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի և մեթադոնային փոխարինող բուժում ստացող շահառուների կարիքների գնահատման վերաբերյալ**

«Սույն զեկույցը հնարավոր է դարձել է իրականացնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆոնդերի հաշվին՝ «Հայաստանում ՄԻԱՎ-ին հակազդման համար ՔՀԿ-երի աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է՝ չհամընկնեն «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան:

Հապավումների ցանկ	4
Նախաբան	5
Հետազոտության իրականացման ընթացակարգ	6
Քննարկվող ծառայությունների ցանկ	7
Հարցման արդյունքների վերլուծություն	8
<i>Ծառայությունների/ապրանքների հասանելիություն</i>	9-11
<i>Տրամադրվող ծառայությունների/ապրանքների որակի գնահատում</i>	13-14
<i>Տրամադրվող ծառայությունների/ապրանքների առաջնահերթությունների գնահատում</i>	14-16
Եզրակացություններ	17

---

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

---

ԹՆՕ	Թմրամիջոցների ներարկային օգտագործող
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս

## ՆԱԽԱԲԱՆ

Վրաստանում Նիդերլանդների Միացյալ Թագավորության դեսպանատան ֆինանսավորմամբ՝ «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանում ՄԻԱՎ-ի հակազդման համար քաղաքացիական հասարակության կառույցների աջակցություն և հզորացում» ծրագրի շրջանակներում, «Դրական մարդկանց հայկական ցանց» սոց. ՀԿ-ն իրականացրել է ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ուղղված ծառայությունների հասանելիության, որակի գնահատում և առաջնահերթությունների որոշում:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) վարակվածության և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումն սկսվել է 1988 թվականից: ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի վիճակագրությունը հետևյալն է՝ 1988թ. մինչև 2017թ. փետրվարի 28-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2603 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 334-ը՝ 2014թ. ընթացքում, ինչն առավելագույնն է բոլոր անցած տարիների համեմատ: Մինչև 2005թ.-ը համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղին հանդիսանում էր թմրամիջոցների ներարկային օգտագործումը: Թմրամիջոցների ներարկային օգտագործողները (ԹՆՕ) մինչ օրս համարվում են խոցելի խմբերից մեկը, որոնց շրջանում 2003թ.-ից սկսված իրականացվում են ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրեր: Ներկայումս համաձայն վիճակագրական տվյալների թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակի փոխանցումը կազմում է 24%: Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով գրեթե բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ:

Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ իրականացվող «ՄԻԱՎ վարակի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի, ինչպես նաև մեթադոնային փոխարինող բորժում ստացող շահառուների կարիքների գնահատման նպատակով իրականացվել են հարցումներ նշված ծրագրերում ընդգրկված և ծառայություններ ստացած ԹՆՕ-ների շրջանում: Դրա անհրաժեշտությունը բխում է տրամադրվող ծառայությունների արդյունավետության բարձրացման, եղած ծառայությունների շրջանակի ընդլայնման նկատառումներից: Ստացված տվյալները հավաքագրվել են, վերլուծվել և ներկայացված են ստորև զեկույցում:

Հետազոտությունը ԹՆՕ-ների շրջանում իրականացրել է «Դրական մարդկանց հայկական ցանց» սոց. ՀԿ-ն, որը 2007թ.-ից սկսած իրականացնում է «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամքի և աջակցության տրամադրում» դրամաշնորհային ծրագիրը՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Կազմակերպության շահառուներն են հանդիսանում ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, այդ թվում ԹՆՕ-ներ կամ նախկինում թմրամիջոց օգտագործողներ: Կազմակերպության գործունեության ընթացքում ԹՆՕ շահառուները հաճախ այցելում են ոչ ՄԻԱՎ-ով ապրող իրենց ընկերների հետ՝ խորհրդատվություն և աջակցություն ստանալու նպատակով:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

---

### Հետազոտության նպատակ

Իրականացնել ՄԻԱՎ վարակի հակազդման ազգային ծրագրի շրջանակներում ԹՆՕ-ներին տրամադրվող ծառայությունների կարիքների գնահատում՝ տրամադրվող ծառայությունների որակի բարելավման և բացերի վերացման նպատակով:

Հետազոտության իրականացման ժամանակահատված. 01.04.2017-31.05.2017

### Հետազոտության խնդիրներ

- ✓ ԹՆՕ-ների կարիքների առաջնահերթությունների վերհանում:
- ✓ ԹՆՕ-ներին տրամադրվող ծառայությունների բացերի բացահայտում:
- ✓ Նոր ծառայությունների անհրաժեշտության գնահատում:

### Օբյեկտ

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի կողմից ծառայություն ստացած և մեթադոնային փոխարինող բուժում ստացող թմրամիջոցների ներարկային օգտագործողները:

### Առարկա

Հետազոտության առարկա է հանդիսացել «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի կողմից ծառայություն ստացած և մեթադոնային փոխարինող բուժում ստացող թմրամիջոցների ներարկային օգտագործողների գնահատականը:

### Հետազոտության իրականացման վայր

Հարցումներն իրականացվել են Երևան և Վանաձոր քաղաքներում:

### Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացնելու համար կիրառվել է տեղեկատվության հավաքագրման քանակական մեթոդներից հարցումը: Հարցումն իրականացվել է ստանդարտացված հարցաթերթիկով, որում ընդգրկված է եղել 34 հարց: Հարցումներն իրականացվել են «Դրական մարդկանց հայկական ցանց» սոց. ՀԿ այցելող ԹՆՕ-ների, նրանց ընկերների, Վանաձորի մեթադոնային փոխարինող բուժում ստացողների շրջանում: Հարցումը իրականացվել է 120 արական սեռի ԹՆՕ-ների շրջանում: Կիրառվել է պատահական ընտրանքի մեթոդը: Քանակական տվյալների վերլուծություն իրականացվել է SPSS ծրագրով, որից հետո տրվել է ընդհանուր եզրակացություն:

Նախապես պլանավորված էր իրականացնել 3 ֆոկուս խմբային քննարկում: Հետազոտության անցկացման ընթացքում պարզ դարձավ, որ ԹՆՕ-ները հակված չեն խմբային քննարկումներում ընդգրկվել: Այսպիսով ֆոկուս խմբերի անցկացումը գործնականում հնարավոր չեղավ իրականացնել:

## ՔՆՆԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

---

Աութրիչ աշխատանք – գնահատվել է աութրիչ իրականացնող խորհրդատուների աշխատանքը

Սոցիալական աջակցություն – գնահատվել է երբևէ որևէ կազմակերպության կողմից տրամադրված սոցիալական աջակցության հասանելիությունը և անհրաժեշտությունը

Հոգեբանական խորհրդատվություն – գնահատվել է հոգեբանների աշխատանքը

Իրավաբանական խորհրդատվություն – գնահատվել է երբևէ որևէ կազմակերպության կողմից տրամադրված իրավաբանական խորհրդատվության հասանելիությունը և անհրաժեշտությունը

Մեթադոնային փոխարինող բուժում – քննարկվել է բուժման հասանելիությունը

Ներարկիչների և ասեղների տրամադրում – քննարկվել է վնասի նվազեցման ծրագրերի շրջանակում տրամադրվող ապրանքների որակը և հասանելիությունը

Պահպանակների տրամադրում - քննարկվել են թե ապրանքի որակը և թե ծառայության հասանելիությունը

Տեղեկատվական-կրթական նյութերի տրամադրում – քննարկվել են նյութերի որակն ու հասանելիությունը

Հարցումներն անցկացվել են «ՄԻԱՎ վարակի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրի շրջանակներում ծառայություն ստացած և մեթադոնային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների հետ: Հարցման նպատակն էր իրականացնել «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում ԹՆՕ-ների շրջանում» ծրագրում ընդգրկված, մեթադոնային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ներին տրամադրվող ծառայությունների կարիքների գնահատում:

Հարցումն իրականացվել է 120 արական սեռի ԹՆՕ-ների շրջանում: Հարցման մասնակիցների տարիքային կտրվածքը 30-60 տարեկանն է: Նշենք, որ հարցմանը մասնակցած ԹՆՕ-ներից 51-ը մարզի բնակիչներ էին, իսկ 69-ը՝ ք. Երևանի:

Այսպիսով, հետազոտության մեջ ընդգրկված մասնակիցների 84,2%-ը հաճախ օգտվում է աուրիչ ծառայությունից, 25,8%-ը ստանում է մեթադոնային փոխարինող բուժում, 60,4%-ը հաճախ օգտվում է ներարկիչների տրամադրման ծառայությունից, 38,3%-ը հաճախ է օգտվում տրամադրվող պահպանակներից, հարցվող ԹՆՕ-ների 22,5%-ը հաճախ դիմում է հոգեբանական խորհրդատվության, 21,7%-ը սոցիալական աջակցությունից է օգտվում, 14,2%-ը հաճախ է դիմում իրավաբանական խորհրդատվության, իսկ 10%-ը հաճախ ստանում է տեղեկատվական-կրթական նյութեր:

*Նշում. սոցիալական աջակցություն և իրավաբանական խորհրդատվություն ԹՆՕ-ները ստացել են, ոչ վնասի նվազեցման և ոչ մեթադոնային ծրագրերի շրջանակում, այս ծառայությունները տրամադրվել են բարեգործական այլ ՀԿ-ների կողմից*



*Աղյուսակ 1. ԹՆՕ-ների տարբեր ծառայություններից օգտվելու ցուցանիշն ըստ բնակության վայրի և տվյալ ծառայության դիմելիության*

Տրամադրվող ծառայություններ	Բնակության վայր		Տվյալ ծառայությունից օգտվածների ընդհանուր քանակը	
	ք. Երևան	Մարզ	Բացարձակ թիվ	Տոկոս, %
Աուֆրիչ ծառայություն	57	44	101	84,2
Սոցիալական աջակցություն	12	14	26	21,7
Հոգեբանական խորհրդատվություն	17	10	27	22,5
Իրավաբանական խորհրդատվություն	13	4	17	14,2
Մեթադոնային փոխարինող բուժում	20	11	31	25,8
Ներարկիչների, ասեղների տրամադրում	41	32	73	60,4
Պահպանակների տրամադրում	24	22	46	38,3
Տեղեկատվական-կրթական նյութերի տրամադրում	7	5	12	10

***Ծառայությունների/ապրանքների հասանելիություն***

Անդրադառնալով տրամադրվող ծառայությունների/ապրանքների հասանելիությանը՝ 119 հարցվող նշել է, որ երբևէ դժվարություն չի առաջացել որևէ ծառայությունից օգտվելու դեպքում, սակայն 1 շահառու նշել է, որ սոցիալական աջակցություն ծառայությունից օգտվելիս դժվարություններ է առաջացել՝ կապված նպաստ ստանալու հետ:

Առանձնացնելով ներարկիչների տրամադրման ծառայությունը՝ կարող ենք նշել, որ վերջին երեք ամսում ներարկիչներ ստացել են բոլոր այն հարցվողները, ովքեր առհասարակ օգտվել են այս ծառայությունից՝ 60,4%-ը: Չնայած այս հանգամանքին հարցման մասնակիցների 95,8%-ը նշել է, որ թմրամիջոցի յուրաքանչյուր ներարկման ժամանակ օգտագործում է նոր ներարկիչ և ասեղ: Իսկ ներարկման ժամանակ նոր ներարկիչ և ասեղ չօգտագործող հարցվողների 80,9%-ը նշել է, որ մինչ թմրամիջոց

ներարկելը սպիրտով ախտահանում է ասեղները և ներարկիչները, իսկ 1 մասնակից նշել է, որ լվանում է: Կարևոր հանգամանք ևս, որ մեթադոնային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների 3,3%-ը նույնպես նշել է, որ ստացել է ներարկիչներ և ասեղներ:

Վերջին 3 ամիսների ընթացքում պահպանակներ ստացել են հարցվողների 38,3%-ը, իսկ 61,7%-ը չի օգտվել այս ծառայությունից: Երբևիցե պահպանակ ստացած ԹՆՕ-ների 74%-ի համար տրամադրվող պահպանակների քանակը բավարար է, իսկ 36%-ը նշում է, որ իրենց համար բավարար չէ:

Աուրիչ ծառայությունից օգտված հարցվողների 96%-ը նշել է, որ իրենց համար աուրիչ ծառայությունը եղել է հասանելի, սակայն 4%-ը նշում է, որ իրենց հրաժարվել են ծառայություն տրամադրել, հետևաբար իրենց գնահատմամբ հասանելի չի եղել: Հարցման մասնակիցները չեն նշել, թե ինչն է եղել պատճառը:

Իրավաբանական խորհրդատվություն ստացած հարցվողներից բոլորը նշել են, որ իրենց երբևէ չեն հրաժարվել խորհրդատվություն տրամադրել՝ 100%:

Հոգեբանական խորհրդատվություն ստացած ԹՆՕ-ների 95%-ը նշել է, որ իրենց երբևէ չեն հրաժարվել հոգեբանական խորհրդատվություն տրամադրել, սակայն 5%-ը նշում է, որ իրենց հրաժարվել են տրամադրել խորհրդատվություն և արդյունքում այս ծառայությունը հասանելի չի եղել իրենց համար: Նշենք, որ հոգեբանական ծառայության ստացման մասին նշել են միայն մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում ընդգրկված ԹՆՕ-ները: Հարցման մասնակիցների 5%-ի պնդմամբ հոգեբանը մեծամասամբ չի եղել իր սենյակում կամ լինելու դեպքում պատճառաբանել է, որ զբաղված է:

Սոցիալական աջակցություն ստացած հարցվողների 97%-ը նշում է, որ իրենց երբևէ չեն հրաժարվել տրամադրել այս ծառայությունը, մինչդեռ 3%-ը նշում է նման խնդրի մասին: Հարցման մասնակիցները նշում էին, որ իրենց հրաժարվել են տրամադրել սննդի փաթեթ՝ պատճառաբանելով, որ այլևս չեն ստանում, հրաժարվել են նպաստ ստանալու համար աջակցել և հրաժարվել են միջնորդել, որպեսզի Հեպատիտ C-ի դեղերը ստանալու դեպքում զեղչեր կիրառվի իրենց նկատմամբ:

Մեթադոնային փոխարինող բուժում ստացող բոլոր մասնակիցները նշել են, որ իրենց համար հասանելի է մեթադոնային փոխարինող բուժումը՝ 100%: Այսպիսով, կարող ենք

եզրակացնել, որ ընդհանուր առմամբ հարցման մասնակիցների համար մեթադոնային փոխարինող բուժումը հասանելի է:

Քանի որ մինչև 2005թ.-ը համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղին հանդիսանում էր թմրամիջոցների ներարկային օգտագործումը և ներկայումս համաձայն վիճակագրության թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակի փոխանցումը կազմում է 24%, այդ իսկ պատճառով առաջնահերթ է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող ծառայությունների հասանելիությունը հենց ԹՆՕ-ների համար: Այսպիսով, հարցման մասնակիցներից բոլորը՝ 100%, նշել են, որ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող ծառայությունները միանգամայն հասանելի են իրենց համար և արդյունքում նրանց երբևէ չեն մերժել հետազոտություն անցնել ՄԻԱՎ-ի նկատմամբ: 120 հարցման մասնակից նշել է, որ հետազոտվել է ՄԻԱՎ-ի նկատմամբ և իմացել է հետազոտության արդյունքները:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հարցմանը մասնակցած ԹՆՕ-ների 70,8%-ը ՄԻԱՎ վարակի վերաբերյալ տեղեկատվություն է ստանում հասարակական կազմակերպությունների միջոցով, 17,5%-ը այդ տեղեկատվությունը ստանում է ընկերներից և միայն 4,2%-ն է ստանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ տեղեկատվություն տեղեկատվական-կրթական նյութերի միջոցով:

*Աղյուսակ 2. ՄԻԱՎ-ի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու աղբյուրները ԹՆՕ-ների շրջանում*

Տեղեկատվության աղբյուր	Բացարձակ թիվ	Տոկոս, %
ՀԿ-ներ	85	70,8
Ընկերներ	21	17,5
ԶԼՄ-ներ	9	7,5
Տեղեկատվական-կրթական նյութեր	5	4,2
Ընդամենը	120	100,0

Հարցվողների 84,2%-ը նշել է, որ իրեն հետաքրքրում է բուժման հետ կապված տեղեկատվություն, 60,8%-ին դեղորայքի հետ կապված տեղեկատվություն է հետաքրքրում, 24,2%-ին առողջ երեխաներ ունենալու հետ կապված տեղեկատվություն և 7,5%-ին ՄԻԱՎ վարակի վերաբերյալ գիտական տեղեկատվություն է հետաքրքրում:

**Տրամադրվող ծառայությունների/ապրանքների որակի գնահատում**

Տրամադրվող ծառայությունների/ապրանքների որակի գնահատումը երևում է ստորև աղյուսակում:

**Աղյուսակ 3. Տրամադրվող ծառայությունների/ապրանքների որակի գնահատում**

Տրամադրվող ծառայություններ	Պատասխաններ					
	Գոհ եմ	Մասամբ եմ գոհ	Եվ գոհ եմ, և գոհ չեմ	Մասամբ գոհ չեմ	Գոհ չեմ	Չեմ օգտվել
Աուֆրիչ ծառայություն	65,8%	5,8%	0,8%	4,2%	8,3%	15,8%
Սոցիալական աջակցություն	10%	8,3%	0%	0%	3,4%	78,3%
Հոգեբանական խորհրդատվություն	11,7%	5%	0%	0%	5,8%	77,5%
Իրավաբանական խորհրդատվություն	5%	6,7%	2,5%	0%	0%	85,8%
Մեթադոնային փոխարինող բուժում	25,8%	0%	0%	0%	0%	74,2%
Ներարկիչների, ասեղների տրամադրում	56,7%	3,7%	0%	0%	0%	39,6%
Պահպանակների տրամադրում	20%	5%	3,3%	0%	10%	61,7%
Տեղեկատվական-կրթական նյութերի տրամադրում	5,8%	1,7%	2,5%	0%	0%	90%

Խորհրդատվությունների որակի վերաբերյալ հարցվողների պատասխաններից կարող ենք կատարել հետևյալ վերլուծությունը, որ աուֆրիչ ծառայություն, սոցիալական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն ստացած հարցվողների 97%-ը գոհ է խորհրդատվությունների որակից և փոփոխությունների կարիք չի տեսնում:

Այսպիսով, աուֆրիչ ծառայությունից օգտված հարցվողների 96,2%-ը նշել է, որ աուֆրիչ ծառայության տրամադրման ընթացքում աշխատակիցը պատասխանել է բոլորը հարցերին պատասխանում են և միայն 3,7%-ն է նշել, որ չեն պատասխանում: Իրավաբանական, սոցիալական և հոգեբանական խորհրդատվություններ ստացած ԹՆՕ-ների 97%-ը նշել են, որ իրենց հարցերին միշտ պատասխանում են, լսում են և

իրենց հուզող հարցի պատասխանը ստանում են, մինչդեռ 3%-ը առանձնացրել է նման խնդիրներ այս ծառայությունների տրամադրման ընթացքում:

Քանի որ խորհրդատվության որակը կախված է նաև այն հանգամանքից, թե որքանով է շահառուն հասկանում և ընկալում տրամադրվող տեղեկատվությունը, ուստի այս հարցին տրված պատասխանների արդյունքում պարզվեց, որ հարցվողների 68,3%-ի համար խորհրդատուի տրամադրած տեղեկատվությունը միշտ հասկանալի է, իսկ 25,8%-ի համար մասամբ է հասկանալի լինում: Կարևոր է նաև պարզել, թե ինչպես է վարվում շահառուն, երբ չի հասկանում տրամադրված տեղեկատվությունը: Այսպիսով, հարցվողների 67,5%-ը, երբ չի հասկանում խորհրդատուի տրամադրած տեղեկատվությունը խնդրում է նորից բացատրել, 16,7%-ը դիմում է ուրիշին, իսկ 15,8%-ը նախընտրում է լռել:

Մեթադոնային փոխարինող բուժում ստացող բոլոր մասնակիցները նշել են, որ գոհ են մեթադոնային փոխարինող բուժումից՝ 100%: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ընդհանուր առմամբ հարցման մասնակիցների համար մեթադոնային փոխարինող բուժման որակի տեսանկյունից որևէ փոփոխության կարիք չկա:

### ***Տրամադրվող ծառայությունների/ապրանքների առաջնահերթությունների գնահատում***

---

Անդրադառնալով տրամադրվող ծառայությունների/ապրանքների առաջնահերթությանը՝ կարող ենք եզրակացնել, որ հարցմանը մասնակցած ԹՆՕ-ների համար առաջնային է համարվում մեթադոնային փոխարինող բուժումը՝ 86,7%, ներարկիչների և ասեղների տրամադրման ծառայությունը՝ 62,5% և աութրիչ ծառայությունը՝ 67,5%:

*Աղյուսակ 4. Բյուջեի կրճատման դեպքում առանձնացված ծառայություններն ըստ առաջնահերթության*

Ծառայություններ	Տոկոս, %
Աութիչ ծառայություն	67,5
Սոցիալական աջակցություն	36,7
Հոգեբանական խորհրդատվություն	19,2
Իրավաբանական խորհրդատվություն	5
Մեթադոնային փոխարինող բուժում	86,7
Ներարկիչների, ասեղների տրամադրում	62,5
Պահպանակների տրամադրում	19,2
Տեղեկատվական- կրթական նյութերի տրամադրում	0

Տրամադրվող ծառայություններից հարցվողները առանձնացրեցին 2 ծառայություն, որոնց կարիքը առավել շատ են զգում, արդյունքում պարզվեց, որ մեթադոնային փոխարինող բուժումը և ներարկիչների, ասեղների տրամադրումը այն ծառայություններն են, որոնց կարիքը շահառուները զգում են բոլորից առավել՝

- 80,8%՝ մեթադոնային փոխարինող բուժում,
- 55,8%՝ ներարկիչների, ասեղների տրամադրում:

Ընդհանրացնելով ամբողջը՝ ավելացնենք, որ նոր ծառայությունների և առաջարկությունների հատվածում հարցման մասնակիցներից 93,3%-ը նշել է, որ նոր ծառայությունների տրամադրման կարիք չի զգում, իսկ 6,7%-ը առանձնացրել է մի շարք նոր ծառայություններ, որոնց կարիքը զգում է՝ այդ թվում անվճար բուժ. ծառայություններ (մասնավորապես դիմաձնոտային վիրաբուժություն), մեթադոնային փոխարինող բուժման ընդլայնում:

Հարցման մասնակից ԹՆՕ-ներից 42,5%-ը հանդես է եկել առաջարկություններով՝ այդ թվում 6 մասնակից նշել է, որ առաջարկում է ԹՆՕ-ներին հասարակական տրանսպորտից անվճար օգտվելու հնարավորություն տրամադրվի, որպեսզի

կարողանան գնալ մեթադոնային փոխարինող բուժում ստանալու, 7 շահառու առանձնացրել է ԹՆՕ-ների անվճար բուժման տրամադրման կարևորությունը (մասնավորապես դիմաճնոտային վիրահատություն): Հարցման մասնակիցներից 8-ի համար անհրաժեշտ է որպեսզի մեթադոնային փոխարինող բուժումը ստանան շաբաթական կտրվածքով՝ ճանապարհային և ժամանակային դժվարություններից խուսափելու համար: 13 հարցվող, ովքեր մարզի բնակիչներ էին, առաջարկում են մեթադոնային փոխարինող բուժում ստանալ իրենց տարածքային պոլիկլինիկայում:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

Ինչպես ցույց են տվել հարցման արդյունքները, հարցման մասնակիցները կարևորել են կանխարգելման և մեթադոնային փոխարինող բուժման ծրագրերի շրջանակում տրամադրվող ծառայությունները: Շահառուները հիմնականում գոհունակություն են հայտնել տրամադրվող ծառայություններից, այնուամենայնիվ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ առաջարկությունների վրա:

Ելնելով հարցման արդյունքներից երևում է, որ ԹՆՕ-ները տարբեր ՀԿ-ներից ստացել են իրավաբանական խորհրդատվություն և սոցիալական աջակցություն: Ծառայություններից օգտված շահառուները բարձր են գնահատել դրանց կարևորությունը: Սա նշանակում է, որ պետք է դիտարկել հնարավորությունը կամ գործող ծրագրերում նշված ծառայությունները տրամադրել կամ ուղղորդել այդ ծառայությունները տրամադրող այլ կազմակերպություններ:

Ինչ վերաբերում է հոգեբանական աջակցությանը, ապա դրա մասին նշել են միայն մեթադոնային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ները: Համաձայն նրանց կարծիքի այս ծառայությունը պետք է լինի ավելի հասանելի իրենց համար: Հոգեբանական ծառայության հասանելիությունը պետք է ընդլայնվի, ոչ միայն մեթադոնային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների, այլև կանխարգելման ծրագրում ընդգրկվածների համար՝ ստեղծելով այդ հնարավորությունը կամ գործող ծրագրերի շրջանակում կամ ներդնել հստակ մեխանիզմներ/պայմանավորվածություններ այլ կազմակերպությունների հետ, որոնք պատրաստ են տրամադրել նմանատիպ ծառայություններ ԹՆՕ-ներին: